# Գործակցության ծրագիր

## Սփյուռքի նախարարությունն ու ԳԱԱ-ն կհամագործակցեն մի շարք ոլորտներում

Հոկտեմբերի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում սփյուռքի նախարարության եւ ԳԱԱ-ի միջեւ ստորագրվեց գործակցության ծրագիր:




Ինչպես հայտնեցին ՀՀ սփյուռքի նախարարության մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, համատեղ քննարկումների ընթացքում ստեղծված ծրագիրը նախատեսում է Հայաստան-սփյուռք գործակցության շրջանակներում գիտակրթական կապերի սերտացմանն ուղղված գործունեության իրականացում, մասնավորապես, սփյուռքի գիտնականների՝ Հայաստանի գիտական կյանքին ինտեգրվելու հնարավորության ստեղծում, հայագիտության եւ սփյուռքագիտության ոլորտում մասնագետների պատրաստում, գիտական գրականության տպագրություն, խորհրդաժողովների, գիտաժողովների անցկացում, սփյուռքահայ արվեստի ուսումնասիրում, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաների միջոցով հայկական համացանցի, էլեկտրոնային գրադարանների ստեղծում, հայագիտական ոլորտի զարգացում եւ այլն:

ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը** նախ ողջունեց եւ շնորհավորեց տիկին **Հրանուշ Հակոբյանին**՝ նախարարի կարգավիճակով առաջին անգամ ակադեմիա այցելելու առթիվ եւ հավաստիացրեց, որ ակադեմիան այսուհետեւ նախարարության դաշնակիցն ու գործընկերն է:

*Շարունակությունը՝ էջ 2*

# «Երեւանի օրեր»









Սկիզբը՝ էջ 1

2008թ., քաղաքապետի կարծիքով, կառուցապատման տեսանկյունից ամենաարդյունավետ տարին է: Նշանակալի իրագործություն էր Հյուսիսային պողոտայի շահագործումը, որը, ըստ Ե. Զախարյանի, սիրելի վայր է դարձել նաեւ ընդդիմադիրների համար: «Այս տարի 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների համար կառուցվել է նաեւ 2 բազմաբնակարան շենք, ինչպես նաեւ իրականացվում է 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքներ»,-ասաց Ե. Զախարյանը: Քաղաքապետը կարեւորեց նաեւ դպրոցաշինության ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է դպրոցներն ապահովել լոկալ ջեռուցմամբ: Արդեն նման համակարգ ունեն 156 դպրոցներ եւ 33 նախադպրոցական հաստատություններ:

Չնայած բազմաթիվ ձեռքբերումներին, քաղաքապետը նշեց, որ կան խնդիրներ, մասնավորապես՝ աղբահանությունը եւ մայրաքաղաքի շատ շենքերի ճարտարապետական տեսքի աղավաղման հարցը: Նա հավաստիացրեց, որ բոլոր խնդիրների ուղղությամբ էլ քայլեր ձեռնարկվում են եւ ամեն ինչ արվում է Երեւանը բարեկեցիկ ու հարմարավետ դարձնելու համար: «Սիրելի երեւանցիներ, մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիս տոնի առթիվ եւ ուզում եմ նշել, որ պետության, հասարակության ջանքերի միավորումով կարող ենք հասնել լավագույն արդյունքի: Երեւանը բոլորիս անգնահատելի սեփականությունն է, եւ պետք է պահպանենք բոլորս միասին»,-իր խոսքը եզրափակեց Ե. Զախարյանը:

Տոնակատարությունը շարունակվեց բեմականացմամբ եւ երաժշտական կատարումներով եւ ավարտվեց Հանրապետության հրապարակում մեծ համերգով ու հրավառությամբ:

Տոնակատարությունը շարունակվելու է նաեւ հոկտեմբերի 11-ին: Նախատեսվում են մի շարք միջոցառումներ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում, որտեղ հանդես կգան փոքր խմբեր՝ ներկայացումներով, համերգներով, խաղերով: Հիմնականում մասնակիցները հանդես են գալու Հյուսիսային, Մաշտոցի պողոտաներում, Աբովյան փողոցում: Եզրափակիչ միջոցառումը տեղի կունենա այսօր երեկոյան, «Հրազդան» մարզադաշտում:

*Արմենպրես*

■

«Երեւանի օր» տոնակատարության շրջանակներում Երեւանի քաղաքապետարանը երեկ հյուրընկալել էր տոնակատարությանը հրավիրված քույր եւ գործընկեր քաղաքների պատվիրակություններին, Երեւանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին:

Քաղաքապետ Երվանդ Զախարյանը բարձր գնահատեց քաղաքների համագործակցությունը եւ հավաստիացրեց, որ Երեւանի՝ վերջին տարիների զարգացման ծրագրերի հաջողությունը նաեւ միջազգային համագործակցության արդյունք է:

Կարեւորեց նաեւ հայկական սփյուռքի մեծ դերը դրանում:

Որպես քաղաքի զարգացման արտահայտիչներ՝ քաղաքապետը նշեց քաղաքի նոր գլխավոր հատակագծի ընդունումը եւ դրա հիման վրա իրականացող հասարակական, մասնավոր եւ սոցիալական՝ օրեցօր ծավալվող շինարարությունը, քաղաքի ենթակառուցվածքների՝ փողոցների, գազամատակարարման, ջրամատակարարման, կապի, արտաքին լուսավորության, ոռոգման ցանցերի արդիականացումը:

Այս ամենը նա առաջին հերթին պայմանավորեց «իրականացվող կայուն պետական ծրագրերով եւ զարգացման գործուն ռազմավարությամբ»:

Քաղաքապետը տեղեկացրեց, որ անկախության առաջին տարիների համեմատությամբ ներկայում շուրջ տասն անգամ մեծացել է երկրի պետական բյուջեն: Իսկ դա նշանակում է, որ այսօր հնարավոր է *«տասն անգամ մեծացնել երկիրը շենացնելու, տնտեսությունը եւ պաշտպանունակությունը մեծացնելու, սոցիալական երաշխիքները եւ հասարակության կեցությունն ամրապնդելու եւ բարելավելու հնարավորությունները»*

: Դրանից անմասն չէ մայրաքաղաք Երեւանը: Քաղաք, որը *«պատմությամբ ու կենսագործությամբ մրցում է աշխարհի հնագույն քաղաքների հետ»*:

Երեւանի հոբելյանական այս տոնակատարությանը վայել նվեր է, թերեւս, Գագիկ Բաղդասարյանի հեղինակած «Երեւան» ալբոմ-գրքի ծնունդը: Երեւանի պատմության ընթացքում այսպիսի ծավալով եւ տպագրական որակով այլ գիրք դժվար է գտնել: Հայերենով եւ երեք (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) լեզուներով հրատարակված գրքում տեղ են գտել Հայաստանի բոլոր տասներկու մայրաքաղաքները: Գունավոր, սեւ ու սպիտակ լուսանկարները, ուղեկցվող տեքստերով, առավել լիարժեք են ներկայացնում Երեւանի եւ պատմական մայրաքաղաքների մասին տեղեկատվությունը: Երեկ տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը:

*Պետրոս ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ*

## ՄԻՋՊԵՏԱԿԱՆ